

# Ա Ի Ե Տ Ա Բ Ե Ր

Շ Ա Բ Ա թ Ա թ Ե Ր թ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն երեքշաբթի: Տարեկան գինն է 1 1/2, վեց ամսուանը 3/4 մէծիտիյէ, կանխիկ, և հատը 30 փարա: Խմբագրութեան և բաժանորդագրութեան վերաբերեալ նամակներ ուղղուելու են առ Մր. Կրիկ, Կ. պոլիս, Ամերիգան խան:

Հ Ա Տ Ո Ր 35.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՓԵՏՐՈՒՄ 14. 1882

Թի 7

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Երկրի վրայ անմահութիւն: — Պատմութիւն Սուրբ զրոյց: — Մկրտութիւն: — Հնարաւոր է: — Սուրբ գիրքը մեկնել: — Խորանք: — Հրածեղտ Քրիստոնեայ նեղեցեցոյց: — Բաղեղոյ Աւետարանականաց վարձարանին անուց շնորհակալութիւնը: — Հանդէս Քրիստոսի թագաւորութեան: — Քաղաքական լուրեր: — Ստակի գիներ:

## ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԱՆՄԱՀԱՌԹԻՒՆ

Անմահութիւն սիրոյ դարձեր երկրի վրայ կու տան մարդուն այնպիսի սուրբ և երանելի անմահութիւն որ շատացուիլու ուրիշ կերպով: Չկայ յատուկ բախտաւորութիւն հաւատար այն մարդուն բախտաւորութեան որոյ երախտեաց և զթոյ յիշատակը կը դրոշմուի ի խորս սրտից: Առակ է թէ մարդկային իւր յուզարկաւորութեան օրնուն համար: Մեր կենաց մէջ անձամբ կը գրենք ինչ որ մեր դադարին վրայ պիտի կարգացուի ի պատիւ մեր: Ոմն կը մեռնի կճեաց պարտան մէջ անթիւ հարստութիւն ունելով դիպուած իւր բողբոսիքը, և մեծ շքով կը յուզարկի ի գերեզման, բայց անոր մահն ի սրտէ ողբացող հաղիւ թէ կը դանուի: Այս մարդը կ'ապրէր իրեն համար, չեղաւ օրհնութիւն ուրիշի կենաց, և ոչ ոք կը յիշէ դնա իբրև առատաձեռն բարերար: Այլ որ կը մեռնի շատ տարբեր վիճակի մէջ: Այս մարդն հարստութիւն չէր լինեց, յուզարկաւորութիւնը չեղաւ այնպէս մեծաշուք, բայց բոլոր ծանօթք ողբացին անոր մահը, և դադարը պատող բաղնութեան աշուրներէն կը հոսէին կաթիլք արտատուաց: Այս բազմութիւնը կը բաղկանար աղքատներէ որ անոր ողորմութենէն կ'ապրէին, ինկածներէ որ անոր օգնութեամբ կանգնած էին, արամեալներէ որ անով կը միխթարուէին: Անթիւ սիրտերու մէջ կայ անոր դործին կամ խօսքին յիշատակը: Թէ այս երկու մարդոց սրն աւելի մեծ օգտու ապրեցաւ և աւելի մեծ պատուով մեռաւ ինքնին յայտնի է:

Այնպիսի անմահութիւն է այս, որուն համար գրեթէ ամէն մարդ ձեռնհաս է: Ուրիշներուն օգտակար ըլլալ գրեթէ առանց ծախուց անգամ կարելի է, այնպէս որ աղքատագոյն մարդն անգամ կրնայ վայելել այս անմահութիւնը: Մեր բոլոր կենաց մէջ ուրիշները մեզի երախտագէտ ընելու համար ուրիշ բան պէտք չէ բայց Քրիստոսի ոգին պահել բոլոր տարին: Մոռնալու ենք զմեզ, և պատրաստ դանուելու ենք լսել ամէն ձայնի որ զմեզ կը կանչէ յօգնութիւն,

նա մանաւանդ կանխելու ենք այն ձայնը: Մարդիկ այնչափ ապերախտ չեն որչափ կը կարծենք մենք երբեմն: Նպատ կամ ծառայութիւն զոր կը մատուցանենք այլոց չի մոռցուիլ դիւրաւ: Անոնք որ ի հարկի և ըստ պատշաճի կ'օգտին մենք՝ կը յիշեն զմեզ նաև յետ օգնութեան: Անոնք զորս քաղցր գլխոյ կարեկցութեամբ կը կապենք մեզի հետ՝ այն կարեկցութեան յիշատակը կը կրեն յաւիտեան: Եթէ լանք ուրիշներուն հետ միամտութեամբ և ճշմարիտ դրոշմով, կրնանք յուսալ թէ մեր յիշատակը երկայնաձիգ ժամանակ պիտի մնայ անոնց մըտաց մէջ:

## ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ

23.  
ԹԱՅԱՌՈՐՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ  
Ամէն ազգի պատմութեան մէջ կան խոռվութեան ժամանակներ, և խաղաղութեան և բարգաւաճման ժամանակներ: Երկուքն ևս, թէպէտ այլազգ, կը փորձեն ժողովուրդը: Երկուքն ևս են Աստուծոյ տեսչութենէն ի խրատ և ի հրահանգ ազգին: Երբ Աստուած Գանանու երկիրը տուաւ Իսրայելացոյց, այն երկրին անդգամ մարդիկը չընկեց հրաշքը, այլ թողուց զանոնք, և պահանջեց իւր ժողովուրդէն որ աշխատի իրեն տեղ պատրաստելու և իմացուց անոր թէ պատրաստ էր օգնել և պաշտպան կենալ անոր, եթէ մնար երկիւղած և պատուիրանապահ: Այսու օրինակաւ կը կառավարէ Աստուած նաև ամէն ազգ և ամէն առանձին մարդ: Ճշմարիտ առակ է թէ Աստուած կ'օգնէ անոնց որ իրենց համար կ'աշխատին: Գալով յաւիտեան կենանք ժամանակելու մեծ խնդրոյն, Աստուծոյ կանոնն այս է, Ձեր անցնի քրիստոնէութեանը քրթոցե՛ք, քանի Աստուած է որ ինք օգնէ ձեզ:

Նոյն իսկ հրաշք դարը տարբեր չէր յայսմ մասին ուրիշ որեկիցէ դարէ: Իսրայելացիք եզիպտոս, անասրտին մէջ և Գանանու երկիրը տեսան Աստուծոյ հզօր ձեռքը, այսինքն՝ անկող սքանչելիք: Բայց և այնպէս անոնց յաջողութիւնը և ձախողութիւնը, բարգաւաճումն և անկումը, գրեթէ նոյն պայմաններէն կախեալ էին: Աստուած թողուց զանոնք անձնիշխանաբար դործել, և ընդհանրապէս անոնց յաջողութիւնը կամ չաջողութիւնը կախեալ էր եղանակէն որով կը վարէին իրենց անձնիշխանութիւնը: Եզիպտոսէ ելլելէն մինչև Դաւիթ, Դաւիթի թագաւորութեան առաջին

տարիներն ի միասին հաշուելով, բոլոր ժամանակը պատերազմի ժամանակ էր: Այս խռովութեան ժամանակը կրնար կարծիլ եթէ Իսրայելացիք հաւատարմին և հնազանդէին: Հուսկ ուրեմն հաճեցաւ Աստուած շնորհել իւր ժողովուրդեան խաղաղութիւն և աշխարհային մեծ յաջողութիւն: Դաւիթի որդին Սողոմոն կը թագաւորէր Իսրայելի վրայ այն յաջողութեան ժամանակ, որոյ փառաւոր յիշատակն, իբրև իւր պատմութեան ոսկի դարը, պահեց միշտ Իսրայելի ազգը: Այս ժամանակին հանգամանքը ցուցնելու համար էր Սողոմոն անունը որ կը նշանակէ խաղաղարար:

Սողոմոն ի տղայութենէ վայելեց մեծամեծ շնորհք: Ի մանկութենէ որոշուած ըլլալով յաջորդել հօրը, թէպէտ Դաւիթի կրտսերագոյն որդին էր էր, դատարարակուեցաւ մեծ խնամով: Չայս կ'ախարհէ ինքն իսկ յԱռակս. Դ. և, և: Հաւանական է թէ յանձնուած էր Սողոմոն առանձին խնամոց և հրահանգաց Նաթանայ մարգարէին, որ Աստուծոյ հրամանաւ տուաւ անոր Յեզեբելի անունն, այսինքն սիրեցեալ ի Տեառնէ, և որոյ որդիքը, հաւանականապէս սորվելով և կրթուելով Սողոմոնի հետ, երբ Սողոմոն թագաւորեց, եղան անոր ընկեր ի խորհրդական (Գ. Թագ. Գ. 5):

Սողոմոն սորվեցաւ անտարակոյս ինչ որ քահանայք, Ղեւտայիք և մարգարէք կը սորվեցնէին, այսինքն՝ օրինաց դիրքը, երաժշտութիւն և երգ, հնոց սուակները և ժամանակակից գիտնոց բոլոր իմաստութիւնը, ինչպէս յիշուած է Ա. Մտաց. Բ. 6: Իսրայելացոց բարեկամութիւնը, որ այն ինչ սկսած էր և կը հաստատուէր տակաւ այն մեծ ծովազնաց ազգին, Փիւնիկեցոց, հետ, աւելցուց, ինչպէս բնական էր, Սողոմոնի գիտութիւնն հեռաւոր աշխարհի և անոր հրաշակերտաց վրայ:

Այս արտաքին առաւելութեանց վրայ ունէր Սողոմոն բնական յաջողակութիւն, արթուն, համարձակ և դուարթ միտք, ուստի և եղաւ այն ժամանակին իմաստնագոյն, գիտնագոյն (Գ. Թագ. Գ. 33) և հռչակաւոր թագաւորը: Սողոմոնի իմաստութեան և մեծութեան համբաւը շարժեց զըշխոյն Սաբայ և ուրիշ շատեր հեռաւոր երկիրներէ դալ և տեսնել զնա անձամբ:

Սողոմոն յղկացաւ նաև հարստութեամբ: Հպատակ իշխանաց մեծազին ընծաները և հեռաւոր երկիրներու հետ յաջող առուստերն յաւելան բուն երկրին սովորական եկամտից վրայ: Վայելելով նաև խաղաղութեան օրհնութիւնները, Սողոմոն կարող եղաւ ըստ հաճոյս մեծամեծ դուրմարներ ծախել, և այնպէս աճեցունել օրքան զօր իւր արքունեաց, քաղաքին և երկրին փառքը և պայծառութիւնը:

## ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

(Աւետարանի 4 խոսքի շարանակութիւն)

5. Ի՞նչպէս կատարուելու է մկրտութիւնը:

Առ այս կը պատասխանենք. պարտի կատարուիլ ջրով ի նշան նուիրեալ ըլլալու առ Աստուած, յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյ սրբոյ: Մատթ. Ի. 19: Մկրտութեան նշանակութիւնն, իբրև նուիրումն անձին առ Աստուած, յայտնի է ի բանիցն Քրիստոսի ի հաստատութեան այս խորհրդոյ, նաև մկրտութիւն բառին սլաւոնացի դործածութեանն, այսինքն՝ երբ խօսքը ջրով մկրտութեան վրայ չէ, զոր օրինակ առ Կորնթ. Ժ. 2 համարին մէջ, ուր Իսրայելացոց համար կ'ըսուի թէ մկրտեցան, այսինքն՝ ընծայուեցան, ի Մովսէս «ամպին ու ծովին մէջ»: Այսպէս, երբ կ'ըսուի ի Քրիստոս մկրտիլ, կը նշանակէ ընծայիլ, նուիրիլ Քրիստոսի. Գաղ. Գ. 27: Քրիստոսի խօսքն առ Յովհաննէս եւ Յակոբոս (Մատթ. Թ. 22, 23) կ'ակնարկէր չարչարանաց մկրտութիւն: Նոյն նշանակութիւնն ունի նաև Չարչարանաց բաժակն ըմպել: Այս եւ ասոր նման խօսք ոչ թէ մկրտութեան ձև կամ եղանակ կը ցուցնեն, այլ այլաբանական ասացում են եւ կը նշանակեն չարչարանք կրել: Այսպէս նաև Հռոմ. Զ. 3, 4, Կող. Բ. 12, եւ Ա. Պետր. Գ. 21 համարները ոչ թէ մկրտելու ձևի մը կը վերաբերին, այլ կը նշանակեն միայն թէ մկրտութիւնը, Քրիստոսի հաւատացած, անոր նուիրուած եւ անոր միջոցաւ մեղքէ սրբուած ըլլալուն իբրև դաւանութիւն, հարկաւոր է: Իսրայելացիք ընկերը մեցան ծովը, եզիպտացիք ընկերը ցան, մինչ Իսրայելացիք իբրև ընդ ցամաք կ'անցնէին ծովէն: Երբ Պետրոս կը յիշէ մկրտութիւնն իբրև «օրինակ» տապանաւ ազատութեան նոյն, նպատակն ընկերում ցուցնել չէ ի մկրտութեան, քանի նոյն ազատեցաւ ոչ թէ ընկերով այլ ընկերով, ընդհակառակն այն դարուն ամբարիշտ մարդիկն ընկերացան եւ կորեան: Նաև Պետրոս կ'ըսէ յայտնապէս թէ, բուն մկրտութիւնը ոչ թէ արտաքին է ջրով, այլ հոգեւորը, «բոր ի խղճմտանքին վիպութիւնը առ Աստուած»: Այսպէս երբ Պոլոս կ'ըսէ, «Դուք ամէնքդ որ Քրիստոսով մկրտուեցաք, Քրիստոսը վրանիզ հագած էք,» ըսել չուզեր թէ մկրտութեան եղանակը զգետու հագնելու պէս է. ինչպէս որ Քրիստոսի «մահուանը մկրտուիլ», «անոր հետ թաղուիլ մկրտութիւնով», չի նշանակեր թէ մկրտութեան եղանակը թաղում է, այլ թէ մկրտեալն իբր թէ խաչուած եւ թաղուած ըլլալու է Քրիստոսի հետ: Հռոմ. Զ. 4, 6: Այս եւ ասոնց նման խօսքեր վերջապէս կը ցուցնեն թէ մկրտելը միացեալ ըլլալու են Քրիստոսի հետ հաւատով, եւ անոր նուիրեալ:

Մկրտութիւն բառը նոր կտակարանին մէջ կը նշանակէ մանաւանդ սրբուիլ Սուրբ Հոգւով: Երբ. Թ. 10 կը յիշուի Մովսէսի սական օրինաց այլեւայլ լուացմանը, Յունարէն բնագիրն հոն ունի «մկրտու-

ՀՆԱՐԱՌՈՐ Է

1. Հնարաւոր է որ ըլլայ Փրկիչիս արեւան մէջ ինձ բաժին . Մահուանը ես առիթ եղայ , Մեղքերս խաչին զինք զամեցին : Ողորմութիւն զորմանալի՛ , Որ Տէրս ինձի համար մեռնի՛ :

2. Այն սէրը որ սիրտի չափէ , Եւ խորութիւնը հասկնայ . Ամենաբարձր սերովի՛ , Ի զուր քննել սիրտի ջանայ : Գաղտնիք անհուն , անգնեցի՛ . Ահա , Ամենաը կը մեռնի :

3. Կամուս փառաց աթոռն ձգեց , Ինքզինք ունայնացուց , Եկաւ , Ձիս կորուսեալս սիրով վնասեց , Մահուամբ հոգիս ծախու առաւ : Անճառելի ողորմութիւն . Ձիս ինձ դատադարտութիւն :

Յիսուս իմն է . անոր յուսամ . Ան է զլուսա , անով կ'ապրիմ . Երբ յայտնուի երկրորդ անգամ , Առջին ուրախ սիրտի կայնիմ : Կը մտնեամ ալ համարձակ , Փրկիչիս ձեռքէն կ'առնեմ սրտակ :

մտ իւր տան մէջ : Ա. յոսէս նաեւ երբ Պետրոս ըսաւ , « Կրնայ մէկը ջուրը արդիւնէ որ ասոնք չմկրտուին , որոնք Հոգին սուրբն ալ ընդունեցին մեզի պէս» , եւ կուռնելուս եւ այլք մկրտուեցան խաչից , հաւանական կը թուի թէ Պետրոս բերել տուա ջուր , եւ ի նշան մաքրութեան սրսից կամ թափեց զայն անոնց վրայ հոն , ոչ թէ անոնք զայն ուրիշ տեղ եւ մկրտուեցան հոն ընկղմումը :

Համար եկեղեցւոյն եւ Բողոքական եկեղեցւոց մեծ մասին սովորութիւնն է մկրտել սրսիւնով , բայց Բողոքական եկեղեցիներէն ոմանք կը մկրտեն ընկղմումը : Ա. յոսէս ինքզինքն մէջ լու է որ իւրաքանչիւր ոք ազատ ըլլայ գործել ըստ իր ձիւ մտաց : Անգղիոյ եկեղեցիներէն շատերուն մէջ , միեւնոյն եկեղեցւոյ անդամներէն կան որ կ'ընտրեն ընկղմումը , կան նաեւ որ յարմարագոյն կը համարին սրսիւնով . ոմանք չեն ընդունիր տղայոց մկրտութիւնը , այլք կ'ընդունին եւ կը մկրտեն զտղայս . բայց եւ այնպէս ամէնքն ունին միեւնոյն հովիւ եւ են միեւնոյն եկեղեցւոյ անդամք : Ա. յոսէս վարուիլ աւաղոյն է քան բաժնուիլ եւ կուռիլ : Ամենուն համար կարեւոր այն է , ճանչնալ ինչ որ կը նշանակէ մկրտութիւնը , ոչ թէ լակ արտաքին արարողութեան մը ընծայել չափազանց յարգ : Աստուած կը շնորհէ իւր օրհնութիւնն ոչ անոնց միայն որ կը մկրտուին ընկղմումը , այլ եւ տանոց որ կը մկրտուին սրսիւնով , բաւական է որ իւրաքանչիւր ոք հաւատարիմ գտնուի Աստուծոյ ծառայութեան մէջ : Մկրտութիւնն ունի իւր կարեւորութիւնը , բայց կայ բան մը որ յանջամբ տեսիլ կարեւոր է : Պողոս կ'ըսէր . « Բրիտանոս զիս մկրտելու չխրից , հապա Աւետարանը քարոզելու » ( Ա. Կորնթ. Ա. 17 ) : Եթէ պաշտօնեայ մը իրեն մասնաւոր գործ կ'ընէ քարոզել մկրտութիւն , եւ յորդորել մարդիկ ընդունել մկրտութեան այն եղանակը զոր ինք կ'ընդունի , կրնայ բարի մարդ ըլլալ , բայց այսպէս վարուելով նմանած չըլլար Պողոսի :

ՍՈՒՐԱ ԳԻՐԳԸ ՄԵԿՆԵՆԸ

6. Չորրորդ կանոն. Մեկնիչը պարտի քննել խնամով ինչ որ ըսուած է յառաջ կամ

յետոյ քան զհամարն զոր սիրտի մեկնէ : Ա. յոսէս նաեւ սրսիւնն միտ չընելով շատեր կ'իյնան մեծ սխալման մէջ : Ա. յոսէս համարը կը մեկնեն իրրեւ դատուեցալ խօսք առանց ամենեւին ուրիշ խօսքի հետ կապակցութեան , ուստի եւ զարմանք չէ որ չեն համար ուղիղ մեկնութեան գրոյն : Մատենագիր մը իւր ստիպող դադարաւոր չի կրնար յայտնել մէկ խօսքով միայն , եւ ինչ որ կ'ըսէ այս ինչ խօսքին մէջ ի կը լիւ բերուելու է այն խօսքին հետ կապակցեալ ուրիշ խօսքերու մէջ ըսուածներուն հետ , քանզի այս վերջինք հարկաւ մինչեւ ատիճան մը կը փոխեն առաջին խօսքերուն նշանակութիւնը :

Ամէն դաւանութենէ աստուածաբանք եւ եւանգելիս շատագոյն կրօնից , երբ կը գտնեն համար մը որ , ինքնին առանձինն , կը թուի նպաստել իրենց կարծեաց , երբեմն չեն կենար տեսնել թէ ինչ ըսուած է յառաջագոյն կամ յետոյ , եւ այնպէս հասկնալ համարին բուն իմաստը , այլ կ'աճապարեն ընդունել զայն զամ իրրեւ պատգամ զոր պարտէ մեկնել առանց զիտելու անոր յարաբերութիւնն ուրիշ համարներու կամ պատգամներու հետ որ սերտ կապակցութիւն ունին առաջնոյն հետ : Չիք տարակոյն թէ Բրիտանիայի եկեղեցւոյ մէջ աստուածաբանական ստատիկ համաձայնութեանց շատերը ծագած են վերոյիշեալ կանոնին բռնաբարութիւն : Եթէ ամէն մեկնիչ իւր կարծեաց նպատակով պատգամին նախորդ եւ յաջորդ համարներուն խնամով միտ դնէր , անտարակոյն ճշմարտութեան աւելի մտ կ'ըլլար անոր մեկնութիւնը :

Մեկնիչը զիտնալու են որ Աստուածաբանի զիրքերը բուն հեղինակներէն բաժնուած չեն զլուսնեբու եւ համարներու . այս բաժանումն եղաւ յետոյ ի զիրքութիւն ընթացողաց , բայց այս բաժանման ուրեք ուրեք համարներ կամ խօսքեր որ սերտիւ միացեալ են իրարու՝ զատուեցան իրարմէ . ուստի Սուրբ գրոց մասերը մեկնելու ատեն հարկ չէ այն բաժանմանց նայիլ :

Հինգերորդ կանոն. Մեկնիչը պարտի , որչափ հնար է , միտ դնել ազգին , կրօնից , դաւանութեան , տիւոց , բարուց եւ առանձին հանգամանաց բուն հեղինակին :

Իւրաքանչիւր ոք ունի առանձին հանգամանք կամ ինքնուս սեպհական յատկութիւններ որովք կը տարբերի ուրիշներէն , եւ որոց պատճառաւ իւր միտքը կը յայտնէ այլ ազգ քան զայլս . ուստի լուս հասկնալու համար հեղինակին միտքը՝ պարտիք զիտնալ վերոյիշեալ պարագաները : Ա. յոսէս Գալատիէ օրհնելի մատենագիր մեկնելու , բայց մասնաւոր՝ Սուրբ գրոց մատենագիրները : Ա. յոսէս վերջիններն արդարեւ Հոգեով սրբով գրած են . մեծապէս կը սխալին սակայն անոնք որ կը կարծեն թէ Սուրբ հոգին այնպէս կը տիրէր մտաց մատենագրին , մինչեւ եղծանել ջնջել ամէն առանձին յատկութիւն եւ ընել մատենագիրն իրրեւ ինքնաշարժ գործիք իւր հրամանին տակ Ժամանակաւ ոմանք կը կարծէին թէ Հոգին սուրբ իրր թէ կը հեղուր սրբազան մատենագրին միտքը խորհուրդ , եւ բերանը՝ խօսք , իբրեւ ջուր խորովակի մէջ . բայց այսպիսի կարծիք ընդունելի չեն հիմա սղջամիտ մեկնիչաց : Երբ կ'ըսուի թէ սրբազան մատենագիրք աստուածուստ ազգեալ կամ չնչեալ կը գրէին , կը նշանակէ թէ այն մատենագիրք թելագրելով , ուղղելով եւ օգնելով Աստուծոյ կ'ըլլային յարմար գրելու , եւ կը գրէին , իբրեւ Աստուծմէ զրկուած պատգամաւորներ , ինչ որ ըստ ամենայնի համոճայն էր կամոցն Աստուծոյ : Սակայն այսպէս գրելով , չէին նուազ լով գործիք , այլ կենդանի եւ բանաւոր գործողք , եւ կը գործածէին իրենց բնական կարողութիւնները . թէպէտ կարող չենք ցուցնել թէ ինչպէս այս երկուս , աստուածային եւ մարդկային , կարողութիւնք կրնային գործել ազատ ի մի եւ ի նոյն անձին , առանց եղծանելոյ միայն զազատ գործողութիւն միւսոյն , զիտեք սակայն թէ այսպէս եղած է : Սրբազան մատենագիրք չեն գրեր իւրաքանչիւր միեւնոյն կերպով , մին միւսոյն գրելով բնաւ չի նմանիր ըստ ոճոյ . իւրաքանչիւր ունի իւր յատուկ ոճ : Թէպէտ ամէնքն էին ներշնչեալ , իւրաքանչիւր կը պատէր իւր առանձին յատկութիւններն : Ինչ տարբերութիւն ի մէջ հեղինակին Աստուծոյ եւ Սաղմոսաց , ի մէջ Եսայեայ եւ Երեմեայ , ի մէջ Յովհաննու , Յակոբոսի եւ Պողոսի . ապա մեկնիչը պարտի միտ դնել Սուրբ գրոց իւրաքանչիւր հեղինակին մասնաւոր հանգամանաց , որպէս զի ուղիղ եւ անթերի մեկնէ հեղինակին գրուածը :

Մեկնիչը պարտի միտ դնել նաեւ թէ ինչ աւետիկ գրուած է զոր սիրտի մեկնէ , պատմական թէ բանաստեղծական , կամ թէ , բառին ճիշդ նշանակութեամբ , աստուածաբանական : Սրբազան մատենագիրներէն ոմանք բանաստեղծ են , եւ ասոնց գրուածները մեկնուելու են ըստ օրինաց բանաստեղծութեան : Անոնց այլապայով խօսքն տեսնուելու չէ բան առ բան ինչպէս կ'առնուի պատմական գրուածոց մը խօսքը : Միւս կողմէն , Սուրբ գրոց յայտնապէս պատմական մասերուն խօսքը չի կրնար առնուիլ այնպէս տրձակ ինչպէս կ'առնուի բանաստեղծականներուն :

Խ Ո Ր Ա Ն Ը

Խորանը զոր կանգնեց Մովսէս անապատին մէջ էր 45 ոտք երկայն եւ 15 ոտք լայն : Խորանն ունէր չորս կարգ ծածկայթ , եւ կը բաժնուէր երկու մաս . մին երկիցս աւելի մեծ քան զմիւսն : Սրտաքին եւ մեծագոյն մասը կը կոչուէր Սուրբ տեղի կամ սրբութիւն , որ էին աշտանակն ոսկի , առաջաւորութեան հացին սեղանը եւ սեղանն ինկոց : Ներքին եւ փոքրագոյն մասը կը կոչուէր Սրբութիւն սրբութեանց , ուր էր տապանակը միայն : Խորանին յօրինման ծախք եղաւ 284,000 լիւրս : Ա. յոսէս մեծութեամբ յօրինուած մը չեղաւ երբեք . այսչափ մեծագնի

Ասոր պատճառ խորանին յօրինուածոց համար գործածուած սուրբն եւ արծաթոյն բարձրութիւնն էր : Խորանին կողմերուն տարածակները կը կենային ձողարծաթէ շինուած 48 պատուանդաններու վրայ , որոյ իւրաքանչիւրին ծանրութիւնն էր 55 քաշ : Ոսկեղէն աշտանակին համար եղաւ աւելի քան 6,556 լիրա ծախք :

ՀՐԱԹԵՏՏ ԲՐԻՍՏՈՆԵՍԱՅ ՆԵՂԵՑԵԼՈՑ

(Աւելի կրնայ «Արեւելեան Եկեղ» երգին եղանակով երգուիլ)

1. Ահա հիմա կ'ըլլեմ ,  
Այս մութ տխուր ճարտն ,  
Կ'երթամ ապրիլ ալ Փրկչին հետ ,  
Յաշխարհն երանաւտ :  
Ահա լուսոյ դաշտերն  
Ինձ կ'երեւան անդէն ,  
Եւ ճառագայթք դիմաց Փրկչիս  
Լուսաւորն հոգիս :
2. Մի՛ լաք , բարեկամներս .  
Իրաւ թողում արդ ձեզ ,  
Բայց չուտ պիտի տեսնենք զիրար  
Վերին լուսոյ աշխարհ :  
Ահա լուսոյ , եւն :
3. Մնաս բարեաւ , աշխարհ ,  
Անդունդ խոր եւ խաւար ,  
Ս'լ ես կ'երթամ այն սուրբ երկիր  
Ուր մութ չիք , չերեւիր :  
Ահա լուսոյ , եւն :
4. Մնաս բարեաւ , տուն իմ ,  
Բեղի ալ պէտք չունիմ .  
Չի՛ ինձ կու տայ բնակարան  
Փրկչիս յիւրում ի տան :  
Ահա լուսոյ , եւն :
5. Մնաս բարեաւ , մարմին ,  
Չար բնութիւն , սիրտ հին ,  
Ս'լ չէք կրնար լացընել զիս ,  
Ո՛հ , հանդէպեաւ հոգիս :  
Ահա լուսոյ , եւն :
6. Խուճեր սուրբ հրեշտակաց  
Եթերն են լեցուցած ,  
Եւ դէմա եկող բարեկամներս  
Կ'երգեն , «Ողջոյն ընդ քեզ» :  
Ահա լուսոյ , եւն :
7. Երկինց կամարն համայն  
Կ'արծազանդէ , տայ ձայն ,  
Հրեշտակք երգեն զերգն միասին  
Փառին եւ Մովսիսին :  
Ահա լուսոյ , եւն :
8. Միացեալ ես ընդ նոսին  
Երգեմ երգ փառանուն ,  
«Փառք եւ ստուիւ քեզ յաւիտեանս  
Որ բաշխեցիր մեզ կեանս» :  
Լուսոյ դաշտերն եղան  
Ինձի բնակարան  
Եւ գեղարիւյլ դէմքն իմ Փրկչիս  
Լուսաւորէ հոգիս :  
Յ. Պ. ԿԱՐՍՊԵՏՅԱՆ

Խորհրդք , Հայաստանեայց Ուսումնարան

ԲԱՂԵՇՈՑ ԱՒԵՏԱՔԱՆԱԿՍԵՍՑ  
ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՍՍԵՆՈՒՑ ՇՆՈՐՀՍԱՎ-  
ԼՈՒԹԻՒՆԸ

1866ին Ամերիկացի միսիոնարաց ձեռքով քաղաքիս մէջ վարժարան մը բացուեցաւ վեց ուսանողաց համար : Իբր երկու տարի ետքը միսիոնարներէն ունեք անձնական տիպարութեան պատճառաւ իրենց հայրենիքը դառնալ ստիպուեցան , եւ վերոյիշեալ վեց աշակերտաց չորսը Խորհրդի անտուածաբանական ձեռնարանը հրաւիրուեցան իրենց ուսման ընթացքն աւարտելու : Այս աշակերտք իբր մէկ ու կէս տարի հոն մնալով իրենց ընթացքն աւարտեցին եւ դարձան ի հայրենիս : Հիմա յիշեալ անձանց մին հոյիւ է , մին բժիշկ , մին յԱմերիկա կը գտնուի , ու չորրորդն ալ մեր այժմու վարժարանն է , Յարութիւն Պաղտատարեան : Միսիոնարք Ամերիկայէն դառնալով դարձեալ սկսան դպրոցը շարունակել 18 աշակերտք , բայց իբր տարի մը ետքը միսիոնարներէն միոյն հարկ եղաւ իւր հայրենիքը դառնալ Մը-

նացեալ միսիոնարին ձեռքով դպրոցը իբր չորս տարի շարունակուելէն ետքը զանազան արգելքներու հանդիպելով փակուեցաւ : Ասկէ տարի մը եւ երկու ամիսներ յառաջ կրկին սկսաւ շարունակուիլ , եւ հիմա քաղաքիս Աւետարանական եւ Լուսաւորչական եղբարց դասակներէն զոտ կան 22 ուսանողներ եօթը տարրեր տեղերէ : Ուսանողաց ամրոզ թիւն է 44 , որ երկու կարգերու կը բաժնուին : Դասատուք են հետեւեալ անձինք . Արժ. Մր. ձ. Ս. Նար , նորա համեստաբարոյ տիկինը , տեղւոյ հովիւը , Պատ. Սիմէոն , Պար. Յարութիւն Պաղտատարեան , եւ մանկավարժ դպրոցին վարժապետ Պար. Սիմէոն Սարգիսեան : Մեզի աւանդուած դասերն են մտաւոր ու գրաւոր թուութիւն , գրաբար քերականութիւն եւ թարգմանութիւն , աշխարհագրութիւն , Սուրբ գրոց մեկնութիւն , ձայնադրութիւն , Տաճկերէն , լեզու Արաբերէն գրով , Անգլերէն կարգաւ , գրել եւ խօսիլ : Դպրոցէն դատ կայ ծաղիկոց մ'ալ ուր աւելի քան 50 մանկուք կ'ուսանին :

Բողոքի մէջ կայ նաեւ աղջկանց համար բարձրագոյն դպրոց մը , որուն վրայով քանիցս տեղեկութիւն տրուած է Աւետարանի եւ այլ լրագրաց միջոցաւ Մեր վարժապետաց ջանքերն եղած չեն մեր մտաւորական կարողութիւնները միայն զարգացնել , այլ բարոյական մտաւորականէն գերազանց դասելով ջանացած են զմեզ առաքինի ընել : Չենք կրնար շնորհակալութեամբ չիշել Բրիտանացի աշխարհին այն բարիքները որ մեք հիմա կը վայելենք , վասն զի մեզի շատերը երբ այս դպրոցը եկանք հասարակ ընթերցանք անգամ չէինք գիտեր , բայց հիմա ոչ միայն աշխարհային գիտութիւններ այլ եւ կենաց բանը կը սորվինք : Չենք կրնար մեր շնորհակալք չյայտնել Ամերիկայի Պորա ընկերութեան եւ նորա անդամոց որոց շնորհիւ այս բարեաց հաղորդ կ'ըլլանք , չենք կրնար նաեւ երախտագրութիւն չյայտնել այն դպրոցաց եւ վարժապետաց որ մեր ուսուցչաց համար կրթութեան հոգ տարած են : Արդ մեր վարժապետները վարձատրելու համար տալու ուրիշ բան չունենալով մեր սրտի խորհին շնորհակալութիւն կը մատուցանենք մասնաւորապէս Տիկին Նարի , որ ոչ միայն դաս կու տայ , այլ իբրեւ խանդակաթ մայր կը լինամէ զմեզ հոգեւորապէս ու մարմնաւորապէս : Մեր շնորհակալութիւնը կը մատուցանենք Միացեալ ընկերութեան տեսուչ Միլտոնէ Էֆէնալ Սարեանին ու Գաբրիէլ Էֆէնալ Լյուպարոնեանին , նաեւ տեղւոյս Լուսաւորչական վարժապետաց որ անցեալ ամառ դպրոցին հարցաքննութեան հանդէսը պատուելով իրենց ազգասիրական յորդորներովը զմեզ քաջալերեցին : Բազաբիս մէջ դպրոցը մը շինութեան ձեռնարկուած է եւ յոյս կայ որ յառաջիկայ ամառ պիտի աւարտի :

Ի դիմաց աշակերտոց  
ՆԵՐՍԵՍ ՄԻԹՐՈՒՄԵԱՆ ԻԿԹՈՒՄԻՆԻԼԵԱՆ  
Բողոք , յունի 9, 1882

ՀԱՆԴԼՍ  
ԲՐԻՍՏՈՒԹՅԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Աստուածորդին կոյս Մարիամին , աննշան եւ զեղծուի կնոջ մը կը ծնանի : Ո՛ւր . պալատանց թէ դարգարեալ տանց մէջ , ոչ , Բէթլեհէմ մի մէկ լիճեանն , աշխարհի գրեթէ ամենէն անարգ տեղն , ախարի մը մէջ : Հրեշտակաց նոր է այս տեսարան , սպառնայ տեսարաններուն անտեղեակ են : Կ'աղչին , կը զարմանան . բայց ի՛նչ ընեն : Կը հրամայուի Փառք Աստուծոյ ի բարձունս երգել : Կ'երգեն : Սակայն գործոյն վստահանին կը սպասեն կը տեսնեն Յիսուս , մտնուի մ'է , ոչ կրնայ խօսիլ եւ ոչ իսկ շարժիլ Սանճարբով փոթթուած մտու-

րէ մէջ կը պառկեցնեն : Աշխարհի փոշիներն կ'աւելն մեռցնել զայն : Բաւաւորաց ձեռք կը հալածեն զնա ի տար աշխարհ : Աղքատիկ կեանք մը կը վարէ նա , որ տեղեկաց հարստութեան անդին է : Արհեստ կը գործէ : Վերջապէս իւր բուն գործին կը սկսի : Տաներիւն մարդիկ իրեն մտերիմ բարեկամներ կ'ընտրեն : Ո՛ք եւն նոքա . ձիւորք եւ մաքսաւորք : Անոնցմէ ինչ բարեկամութիւն կը վայելէ : Մին կը մտնի , միւսն կ'անիծէ զնա : Հրեշտակք կը զարմանան , Աստուած երբեմն երկնային գաւազներ օրինապէս թռեալու մը համար ի դժոխս կը թօթալէ , իսկ այս անգիւղաց կը լռէ : Սուրբ Հրեշտակներ չէին համարձակեր անոր մերձենալ , այժմ տատանայք կը լուրձեն զնա , եւ անոր հետ կը խաղան : Մաքսաւորաց եւ մեղաւորաց բարեկամ կը լինի : Հոյեւրու եւ ծովերու կ'իջնէ , հրաշագործութիւններ կ'ընէ , դեւերու իշխան Բեղլեբուրդ կը կոչուի ի մարդկանէ նա որ դեւերին յանձնուի կը զլրի , եւ զանոնք դժոխոց անդունդը կը հալածէ : Յիսուս կը համբերէ , հրեշտակք յաղաւ իր թեալ կը հային : Յիսուս իբր երեք տարի կը յոգնի , կը քըլտանի , ամէն նախաժամը կը կրէ : Վերջապէս իր ազը դատախազ կը կանգնի աւեր դէմ , եւ խաչի տնարգ մահու կը դատապարտէ զնա : Չիտուորք կը կողմն զձեռս նորա , որ գոհեղերս ունի ի բռին : Կուտի կը զարնեն անոր , որոյ մէկ ակնարկը հանուր աշխարհ կրնայ ի չեք դարձուցանել : Կ'ապտակին այն բերան , որոյ կարող բանիւ աշխարհ կու գայ չեպից ի գայ : Կը ծաղրեն , կը թքանեն , ծիրանի կը հաղցնեն : Խաչի ծանր փայտեր անոր սին վրայ դնելով Գողգոթային դաղաթ կը հանեն զնա : Խաչը կը կանգնուի , երկու նշանաւոր աւազակաց մէջ զՅիսուս կը կանխեն : Որովտի դասն կուտիւնանք : Վերքեր կը խորանան , արեգակն կը կիզէ , ցառք անկրկի կը լինին : Ովիլանոց արարչին կաթիլ մի ջրոյ պէտք կը դգայ , սակայն կաթիլ մի ջուր կը զլացուի անից : Սոսկալի շարիքը դեւերին չէ ըմբռնել , Ֆիլիբալիան ցառոյ վերայ բարոյական վիշտք կը յաւելուն : Հայրը իւր դէմք կը դարձնէ : Ահազին վիշտ : Անբաւական դուրով ի հանդուրժել Յիսուս գլուխն կը խոնարհեցնէ եւ կը մեռնի : Աւա՛ղ Յիսուս , հրեշտակք կ'աղաղակեն :

Այս դրէն ինչ կ'արժէր : Այս շարժարանք կրող մարդ մը չէր , հրեշտակ մը չէր , արարած չէր , արարիչ էր : Եւ որո՞ց համար կը մեռնի : Արարիչ մը իւր արարածոց համար մեռնի : Այս արդեօք յիմար թէ անհուն խնայտուն անօրինութիւն մ'էր . քաւ յիմարութիւն համարիլ : Ուստի մեծ անարգութիւն կարգաբերութիւն մ'ըլլաւու է :

Դարուց հոլովմաք այս խնայտութեան փայլն կ'աւաւելու : Կ'անցնին տարիք եւ ըստ աստուածային անօրինութեան կը տարածի , կ'ընդարձակի Բրիտանի հոգեւոր թագաւորութիւն :

Աստուած , իւր քաղաքական խնայտութիւնն եկեղեցիին ձեռքով երկինքը եղաւ ներուն յայտնել ուղեւով (Եփես. Գ. 10) , թող հրեշտակաց ամանց թոյլ տայ սաւառնիլ յաշխարհ եւ ընդ թեւս արշաւուոյն դառնալ գաշխարհաւ , եւ տեսնել խոջին արգասիք :

Արշալոյսն զձաբոն կը լուսաւորէր երբ հրեշտակք ընկերացան անոր : Հոն կը գտնեն մեծ բազմութիւն , որ կ'արգահատին իրենց եղբարց , զի Բրիտանու եւ Աւետարան չունին : Որովտի ջրմուսնաւ շնորհակալք կը մատուցանեն առ խաչեալն որ փրկուելն շնորհած է անոնց : Ո՛ք կ'ընեն իրենց ամենայն գործ ի փառս եւ ի սէր Յիսուսի : Անճնուրաց եւ սիրալիւր ծառայութիւնք վասն Փրկչին : Բոնի՛ քաղցր թուեցան հրեշտակաց , որք ի զին կային :

Չինու սահմանը կը ժամանեն , կը տեսնեն որ կուց սեղանք կը կործանին , չաստուածներ կը վերին , կը խորտակին , մեհեանք եկեղեցեաց կը փոխարկին , հոն փոխան սին վարդապետութեանց Յիսուս խաչեալն կը քարոզուի : Ապականեալ սիրտք փոքր առ փոքր տեղի կուտան Հոգւոյն ներդրութեանց , ուստի կը սրբուին , կ'ազնուանան :

Ընդ թեւս արշաւուոյն Հնդկաստանի սահմանը կը մտնեն : Ի՞նչ կը տեսնեն անդ . ինչ կը լուրի : Երբեմն Տուլայ Սինի , արքայազուն իշխանն , մարդկան արհամարհ եւ բարեկամաց խնդրք եւ պաղատանք առ ոչինչ կը դրէ , եւ կ'ընդունի զՅիսուս տոնէութիւն : Առաւել լաւագոյն կը համարի Աստուծոյ ժողովուրդեան հետ շարժարուիլ քան գահայից վերայ բազմեալ մեղաց ժամանակաւոր հաճոյքներն վայելել :

Հազարաւորք կը փութան յանուն ամենասուրբ երրորդութեան մկրտիլ , եւ զՅիսուս իրենց փրկիչն դաւանիլ հրապարտուի : Պատրաստ են առնուլ Յիսուսին խաչ յուս , ոչ իբր անարգանք եւ ծանրութիւն , այլ իբր սիրելի եւ նուիրական դործ : Հնդկաստանի լեռներ կ'արձագանքեն «Ո՛վ է Բրիտանու , որոյ ուսմամբ Հնդկաստան լեցուեցաւ : » « Տիեզերաց արարիչն եւ փրկիչ » կը պատասխանեն բազմութիւ հաւատացեալք : Բրիտանեական կրօնը կը տարածի ի Հնդկաստան . Յիսուսի Եւրոպացի եւ Ամերիկացի աշակերտաց վարք , որք սովորաց ունեցին , խոր կը ներգործեն Հնդկական ժողովրդեան , եւ փառաբանութիւն կ'երգեն Յիսուսի նոյն իսկ կուսապաշտներ : Սուս աստուածներ ամօթաւոր կը կործանին :

Կղզիք սոտ եւ անդ ցրուեալ կը գլուսեն հրեշտակաց զուր եւ զուրու : Ոչ սաւառք ի կղզեաց բոլորովն ջնջած են կուսքեր : Բրիտանու եկեղեցին հաստատուած է եւ զինուորեալ բանակն Յիսուսի ամբաստի կը զորանայ կը ստուարանայ , եւ ամենեցուն փառք պատկանի խաչեալն Յիսուսի :

Աստուածուն վաղիւ , ըստ առաջարկութեան Աւետարանական Դաշնակցութեան , արք եւ կանայք , երիտասարդք եւ պատանիք , կը փութան կը ձեպեն երթալ յեկեղեցի , աչք յերկինս , ձեռք բարձրացեալ , սիրտ յուղեալ , հոգի զուարթացեալ բիւր դովաբանութիւն եւ շնորհակալք վերաբարեն առ զթած Փրկիչն , որ աշխարհ եկաւ փրկել զմեզաւորս :

Հրեշտակք կ'ամեն կ'ամեն ի զին կալ աշխարհացն եւ կղզեաց , սակայն ընդ թեւս արշաւուոյ հասան յԱփրիկէ : Ափրիկէն շնորհակալեաց ձայն կը լուրի վասն կրօնին զոր Յիսուս ուսուց : Բրիտանեական կրօնին աստուածային լինիլն կը զիտցուի : Ափրիկէի մեծամեծք զԱւետարան կ'ընտրեն իրենց օրինակը , ուստի զՅիսուս իրենց երկինք Տէր եւ իշխան կը կարգեն : Եթ սպալիս իւր ձեռքերն չուտով Աստուծոյ կը վերցնէ :

Հանուր Բրիտանեաց երկիրներէ նոյն ձայն եւ նոյն հնչիւն կը լուրի : Երոտա եւ Ամերիկա իրենց յաղորդութեան եւ զարգացման փառք Յիսուսի կը նուիրեն , Յիսուսի սորվեցուցած եւ վարուք քարոզած կրօնին : Մեծամեծք , իշխանք , արքայք իրենց թագն ու փառք Յիսուսի ստից առջեւ կը դնեն : Կլատարաններ խաչեալն Բրիտանու խաչին պատուներն ենք , կ'աղաղակեն :

Արդ , այն հրեշտակք որ ի ծննդեանն Յիսուսի փառք Աստուծոյ ի բարձունս կ'երգէին անօրինին խնայտութեան վրաստակելով , այժմ նորա խաչին արգասիք տեսնելով կ'երգեն ոչ միայն փառք Աստուծոյ ի բարձունս , այլ եւ յերկիր խաղաղութիւն , ի մարդիկ հաճութիւն :

Հրեշտակք երկնայնոց կը խառնուին եւ երկինք նոր երգերով կը փառաւորեն Գառնուկը :  
ՍՐԱՄ Եւ ԳԱՐԻԵԼԵԱՆ  
ԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փետ. 2 ըստ Յուն. և փետ. 14 ըստ Լատ. 1882

ԵՂԻՍՏՈՍ

Եղիստոսն առնուած մանրամասն տեղեկութիւնք կը բացատրեն այն երկրին մէջ պաշտօնէից նոր փոփոխութիւնք : Եղիստոսն փառայի եւ երեւելեաց ժողովոյ մէջտեղ երկար բանակցութենէ ետքը համաձայնութիւն գոյացաւ 52 կէտերէն 48ին վրայ : Սահայն Արապի պէյ, իւր կողմն ունենալով պիւնտուրական կուսակցութիւնը, պնդեց որ երեւելեաց ժողովոյ բոլոր պահանջներն, ընդ որս եւ երեւմտացի քննութեան իրաւունքը, ընդունուին, եւ անոր դրոշմամբ երեւելեաց ժողովը վճռական կերպով պահանջեց Եղիստոսն փառային կամ ընդունել ժողովոյ պահանջներն եւ կամ հրաժարիլ : Ասոր վրայ Եղիստոսն փառայ երեւելեաց ժողովոյ առաջարկեց իրեն զիմել, ինք եւս իւր հրաժարականը տուաւ : Ինչպէս արդէն ծանուցինք, իրար պաշտօնէից նախագահ կարգեց Մահմուտ Պարուտի փառայ, եւ պատերազմի պաշտօնեայ Արապի պէյ : Այս պաշտօնեայք եւ այլ բարեկամ են ազգային կուսակցութեան գործը : Նոր պաշտօնէութեան կազմութենէն ի վեր իրեն ստորագրած է հրամանագիր մը որ կուսայ երեւելեաց ժողովոյ իրաւունք քննելու եւ վաւերացնելու երեւմտացոյցը : Իրար յանձնարարած է նաեւ նոր պաշտօնէից երեւելեաց ժողովոյ հետ համաձայնութեամբ դրոշմը : Սահայն հասկցուած է թէ երեւելեաց ժողովը պիտի քննէ եւ վաւերացնէ վարչական ծախքերը միայն, եւ պիտի չմիջամտէ այն եկամուտներուն որ յատկացուած են ընդհանուր պարտուց շահին եւ գլխամասին հատուցման : Այս վերջին եկամուտք, ըստ դաշնագրութեանց որ կնքուած են օտար տէրութեանց հետ, դրուած են ընդհանուրութեամբ Անգլիացի եւ Գաղիացի երկու պաշտօնատարաց, զորս անուանած է իրար հաւանութեամբ Անգլիոյ եւ Գաղիոյ կառավարութեանց :

Անգլիոյ ազգային ժողովոյ բացման ամիսը որ եղաւ փետ. 7ին, Անգլիական կառավարութիւնն յայտարարեց թէ Եղիստոսի բարեք վարչութեան եւ օրինաց իմաստուն դրոշմագրութեան համար, ինք իւր ազգացութիւնը պիտի բանեցնէ պահպանելու այն իրաւունքներն որ արդէն հաստատուած են թէ Սուլթաններու հրովարտակներով եւ թէ այլեւայլ միջազգային սոցիալականութիւններով :

Պէրսիոնէն եւ Վիէնայէն առնուած հեռագրաց նայելով բանակցութիւնք եղած են բոլոր մեծ տէրութեանց մէջտեղ Եղիստոսի նկատմամբ ընդհանուր համաձայնութիւն մը գոյացնելու համար :

Ասոյժով ազգային կոչուած կուսակցութիւնն, այսինքն գլխուորական կուսակցութիւնն, առած է բոլոր ինչ որ կը պահանջէր, եւ այս կուսակցութեան բուն գլխաւորութիւնները պիտի զիտցուին քիչ ատենէն : Եթէ այն կուսակցութիւնը ձեռք կ'առնէ այնպիսի միջոցներ որ երկիրը տակաւ առ տակաւ եւ հանդարտ կերպով բարգաւաճի, եւ կ'ընծայէ արժանաւոր յարգ ներկայ իրաւանց եւ դաշնագրութեանց, պիտի ունենայ փառաւոր ստապայ, իսկ եթէ ընդհանուրակը կ'ուզէ վեր ի վայր չըջել ներկայ կարգադրութիւնները, տարակոյս չկայ թէ քիչ ատենէն Երուսաղիմի միջամտութիւն տեղի պիտի ունենայ :

ՀԵՐՄԵՒ ԵՒ ՊՈՍՏԻՍ.

Վիէնայէն զարնուած հեռագիր մը կ'ըսէ թէ Հերմէքի մէջ Տալիզոյի հրամանատարութեան ներքեւ գտնուած արքայատանից խումբ մը կը բաղկանայ 450

հոգիէ, որոց բոլորն ալ զինեալ են Մարդիկն Հէնրի հրացաններով : Այս արքայատանից կը կենան Եւալայի եւ Սեդուազի մէջտեղ : Երկու հարիւր հոգիէ բաղկացեալ ապստամբաց ուրիշ խումբ մը ընդհանրապէս անհետացաւ Օսման պէյի Պիլէքի հիւսիսային կողմն ամուր դիրք մը բռնած է : Գարատաղցի վայրատայի մը հրամանատարութեան ներքեւ գտնուած ուրիշ խումբ մը կը բաղկանայ 650 հոգիէ : Փոքր խումբեր կը գտնուին ամէն կողմ : Գաղմատայի մէջ կան 1,600 ապստամբք, եւ Պոստիոյ մէջ, Սէրայովոյի հարաւային կողմը, կայ մեծ խումբ մը ապստամբաց, որոց, կ'ըսուի թէ, Բուս պաշտօնակալը հրամանատարութիւն կ'ընեն : Այս վերջին խումբն ունի ամբողջ մարտկոց մը լեռնային թիղանթ : Գրիտոնեայք եւ Մահմետականք միացած են իրենց վրայէն ի բաց թօթախելու Աւստրիական իշխանութեան լուծը : Աւստրիոյ ծառայութեան մէջ գտնուող օստիկանաց մէջ կան որ միացած են ապստամբաց հետ :

Անցեալ շաբաթ քանի մը փոքր կուսներ եղան Աւստրիական զօրաց եւ արքայատանից մէջտեղ, եւ հեռագիր մը կ'ըսէ թէ ապստամբ Մոսթարի եւ Սէրայովոյի մէջտեղ Գանիճա քաղաքը զբաւած եւ այրած են :

Ապստամբ կը գտնուուին թէ Աւստրիացիք յարգած չեն երկրին սովորութիւնները, թէ Սլաւ վարժապետք հանուած են գաղտնիք ստ պատճառաւ միայն որ Գերմաններէ չէին գիտեր, թէ օրէնքներ գրուած են Լատին գրերով զոր չգիտեր ժողովուրդը, եւ վերջապէս կը գտնուուին թէ Աւստրիացոյց կողմէն ջանք եղած է ժողովուրդը Գերմանացի եւ Կաթոլիկ ընելու : Մինչ ժողովուրդն այսպէս յուզեալ վիճակի մէջ էր, Աւստրիական կառավարութիւնը հրաման արար զօրք առնուլ, թէ եւ առաջին տարին 1,200 զինուոր միայն ուղեց նահանգին մէջ ծառայելու համար : Սահայն տեղացիք կասկած ունէին Աւստրիոյ այս պահանջման վրայ, ուստի եւ ոտք եղան զէմ դնելու : Գարատաղի, Սերուսայ եւ ուրիշ երկիրներու Սլաւ ժողովուրդեան մէջ շատ համակրութիւն կը ցուցուի Գաղմատայի, Հերմէքի եւ Պոստիոյ Սլաւաց համար : Սահայն տարակոյս չկայ թէ անօգուտ արիւնհեղուքներէ ետքը ապստամբք պիտի զստուին : Աւստրիա հաստատուն կերպով սրաշուծ է թոյլ չտալ որ ուրիշ անկախ Սլաւ իշխանութիւն մը կազմուի իւր սահմանագիծով վրայ :

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ յանձնարարութեան մեծ տէրութեանց Բ. դուռը մտներ Յունաստանի թողուց սահմանագիծով վրայ երեք տեղ զորս առաջ ուղած չէր տալ, բայց եւ այնպէս Բ. դուռը դեռ կը մերժէ թողուլ չորրորդ տեղ մը զոր կը պահանջէ Յունաստան : Կը կարծուի որ թէ թուրքիս եւ թէ Յունաստան պիտի վերցնեն իրենց մաքսատուներն Արդա քաղաքին մօտ Արդա գետին կամուրջին վրայէն :

Բ. դրան կողմէն կարգուած յանձնաժողով մը կը գտնուուի թէ Սլէզիոյ փառայ մտներ սիսաւ գործադրել անշարժ կալուածոց վերաբերեալ օրէնք մը որ Բ. դուռն վաւերացուած չէր :

Ինն նշանաւոր Ալպանիացիք որոց երեքը Մահմետական, երեքն Որդոտըս Գրիտոնեայ եւ երեքը Կաթոլիկ Միւրիդ են, Կ. պոլիս հասած են, եւ պատերազմական զորքոց պաշտօնարանին մէջ անոնց յատուկ տեղ արուած է բնակութեան : Այս անձինք են պատանդներ որ տրուած են Տէրվիլ վաշայի իրբեւ երաշխաւորութիւն հաւատարմութեան Ալպանիոյ :

Այնթապի գրուած եւ Լընտըն թոյլով րադիկոյ յունի 16/28 թուոյց մէջ հրատարակուած նամակ մը կ'ըսէ թէ Այնթապի կողմերն անցեալ տարւոյ հնձոց աւատութեան պատճառաւ այս տարի ժողովուրդը աւելի հանդիստ է, եւ աւազակութիւնը քիչցած է : Անցեալ տարի Այնթապի մէջ շատ մը նոր շէնքեր շինուած են : Այս շէնքերէն երկուքն էին տուներ բժշկական դպրոցի գտնուած համար : Գաղաքին դպրոցաց աշակերտները շատ աւելցած են, եւ Մահմետական ժողովուրդն սկսած է աւելի կարեւորութիւն տալ դպրոցաց : Կուսակալն որբա-

նոց մը բացած է վերջին պատերազմին մէջ մեռնողներուն որոց համար : Բոլոր նահանգին մէջ գտնուած որբ մանկանց թիւը շատ մեծ է : Բողոքականաց որբանոցի աշակերտաց թիւն է 66, եւ Այնթապի գոլէճի աշակերտաց թիւն է 85 : Գաղիական կառավարութիւնը հիւպատոս մը կարգած է Այնթապի համար, բայց որովհետեւ Այնթապի մէջ Գաղիական հպատակ չկայ, կը կարծուի թէ նոր հիւպատոսին պաշտօնը պիտի ըլլայ աւելի կարեւոր : Այնթապի կառավարութեան այս տեղի դէպքերուն վրայ :

Ս. Յ. Լ. Ե. Ս. Յ. Լ. Բ.

Վեհ, Սուլթանին հրամանաւ անցեալ շաբաթ մեծ քանակութեամբ ածուխ բաշխուեցաւ Պոլսոյ եւ Իսկիւտարի աղքատաց : Քանի մը շաբաթ առաջ Անգլիական շոգենաւ մը Մախսուսէի ընկերութեան շոգենաւերէն մէկուն զարնուեցաւ Նիկիովիոյ ծոցին մէջ : Անգլիական շոգենաւին տէրերը Մախսուսէի ընկերութեան 500 լիւրա տուած են ի փոխարէն քիստոց : Պրուսայի նահանգին իշխանութիւնը կայտերական կառավարութեանն հարիւր յիսուն քաջ չերամի հունու լանդարմ է յիշեալ նահանգի բնակչաց բաշխելու, եւ նոր գրգռու առաւ շերմատածութեան, որ հետզհետէ կը նուազի յիշեալ նահանգին մէջ : Քանի մ'օր առաջ Բերլին բանտին մէջ եօթը բանտարկեալք յարձակեցան թուրք զինուորի մը վրայ որ պահպանութիւն կ'ընէր, եւ սպանեցին զան : Կ'ըսուի թէ բոլոր բանտարկեալք էին Գրիտոնեայ : Անցեալ շաբաթ Կ. պոլսէն Եւմէն զրիւնեցան չորս փառայ հետեւակի զօրք եւ երկու մարտից թիղանթ : Եղիստոսի իրար կարգած է յանձնաժողով մը որոյ պարծն է պահպանել այն երկրին մէջ Արաբական արուեստի վերաբերեալ ճարտարապետական, գեղագրական եւ դրամագրական ամէն ինչ գործ : Այս յանձնաժողովոյ գործածութեան համար 7,000 լիւրա յատկացուած է : Յունաստանի ազգային ժողովը մէջ ներկայ պայտօնէից հակուակ կուսակցութիւնն 50 ծայն աւելի ունի : Ալճերիոյ հարաւային կողմը գտնուած Գաղիական զօրքն սպստամբներէ 600 ուղտ եւ 10,000 ոչխար ուտար առած են : Դրամական մեծ տալանտով մը որ մտներ պատանհեցաւ Բարիլի եւ Լիոնի մէջ, մեծ կորուստ պատճառեց բազմթիւ անձանց : Կառավարութեանն օգնութիւն ուղղեցաւ դրամաւորները ներութեան ազատելու : Բայց չարուեցաւ : Մ. Կամպիզդա պաշտօնէութեան ինչպէս ետն Բարիլէն մեկնեցաւ ժամանակ մը չըջելու Գաղիոյ հարաւային կողմը :

1881 ին Անգլիոյցն զուրս տարուած բերքերու եւ վաճառաց արժէքն էր 253,940,000 Անգլիական լիւրա : Յունի. 17/29ին Պատը Գաղապրիացի հովի մը դասեց սրտը կարգը : Այս հովիւը ծնած էր 1882ին, եւ կ'ըսուի թէ հաշակաւոր եղած է իւր մարդարեալական կարողութեան համար : Այս երրորդ անձն է զոր Պատը սրտը կարգը դատած է կարճ ժամանակի մէջ : Բուսիոյ կայսրը ցկեանա շըլթոյակապ աշխատութեան փոխած է մահուան վճիռը որ տրուած էր Չիլիէի զօրապետը սպաննել փորձող Սանքիսքի անուն անձին դէմ : Բուսիոյ կայսրը յանձնաժողով մը կարգած է մտերս Սիպերիա զրիւնեւ քանի մը հազար անձանց դէմ եղած արատաստութիւնները քննելու : Այս յանձնաժողովոյ ջանից շնորհիւ 528 անձինք ազատած են, եւ ուրիշ բազմաթիւ անձանց աքսորի ժամանակը նուազեցուած է : Բուսիոյ երեւմտեց պաշտօնեայն կը յուսայ թէ այս տարի կառավարութեան հանքերէն 55 միլիոն ռուսլի արծողութեանը սակի պիտի ընդունուի : Այս սակին սակի զարմալարի հատանուի : Հնդկաստանէն զարնուած հեռագիր մը կ'ըսէ որ Հերազի մէջ ապստամբութիւն ծագած է, եւ Ալքանիստանի էմիրը զօրք զրկած է ապստամբութիւնը զսպելու :

Ս. Ռ. Ս. Բ. Ե. Լ. ՈՒՐԵՐ

Բուսիոյ մէջ Հրէից դէմ հալածանքը կը շարունակէ : Մօտերս տօնի օր մը Նաւաբադի քաղաքին մէջ հինգ հոգիէ բաղկացեալ Հրէայ ընտանիք մը սպանուեցաւ, եւ Գրասիլիքա գիւղին մէջ Բուսը յարձակելով 57 անգամէ քաղաքաւոր 16 Հրէայ ընտանեաց տուներու վրայ

անոնց ստացուածքը կողոպտեցին : Վարչաւի տեղական կառավարութեան պաշտօնական տեղեկութեանց նայելով յիշեալ քաղաքի Հրէայք իրենց կարուած ստացուածոց փոխարէն 1,300,000 ռուսլի պահանջած են : Տեղական կառավարութիւնը հաւանած է 767,559 ռուսլի հատուցանել :

Ըստ Լատ. փետ. 1 ին Լոնտօնի մէջ մեծ ժողով մ'եղաւ Բուսիոյ մէջ Հրէից դէմ յարուցուած հալածանքը դատաւարութեան, եւ հալածեալ համակրութիւն ցուցնելու համար : Այն գաւառներէն Գրիտոնեայք եւ շատ նշանաւոր անձինք ներկայ էին այս ժողովոյ, որուն կը նախագահէր Լոնտօնի քաղաքապետը : Այս ժողովոյ մէջ ատենաբանութիւններ ըրին Անգլիական Աստուածաշունչի ընկերութեան նախագահ Լորտ Շաֆթզըսլուրի եւ Անգլիոյ մէջ Կաթոլիկ եկեղեցոյ գլուխը կարգիալ Մանինկ : Մեծ յանձնաժողով մը կազմուեցաւ դրամ հաւաքելու ի նպատակ հալածեալ Հրէից : Ժողովը միակուելու ատեն աւելի քան 15,000 Անգլիական լիւրա հանգանակուեցաւ, եւ այնուհետեւ մեծ գումարներ արուեցան :

Նոյն երկրիցն մեծ ժողով մ'եղաւ նաեւ Նիւ Եորքի մէջ քաղաքապետին նախագահութեան ներքեւ : Ատենաբանութիւններ եղան Ամերիկայի տրտաբան գործոց նախարար պաշտօնէին եւ նշանաւոր հովիւներէ եւ ուրիւններէ : Ամերիկայի Հրէից մէջ յանձնաժողովը կ'աշխատի մէկ միլիոն թախիբ հաւաքելու Բուսիոյցն 10,000 Հրէայ Ամերիկա գաղթել տալու համար :

Յունի. 12/24 ին Փեդրասուրբի մէջ խնջոք արուեցաւ ի յիշատակ դրաման Կիօք Թէփիկի որ տարի մ'առաջ Բուսոց ձեռքն ինկաւ : Այս ամիսը Արտուէլֆ զօրապետն, որ նուաճեց Թէքէ թիւրք մէկներն, ըսաւ թէ արեւելոյ խորքն Բուսիոյ անունն է հիմա աւելի զօրաւոր քան երբէք, եւ խնդրեց Բուսիոյ բանակի պաշտօնակալներէն եւ զինուորներէն չունենալ երեւակայական գաղափարներ եւ տալ զիրենք ի փառս հայրենեաց : Արտուէլֆ զօրապետը թոյլտուութիւն ընդունած է Երուսաղիմի վերաբերեալ, եւ կը խորհի երկար ատեն մնալ ի Բարիլ : Հարաւային Ամերիկայի մէջ Չիլիի կառավարութիւնը Բէրաի կառավարութեանն կը պահանջէ 20,000,000 թախիբ տուգանք եւ Բէրաի երկրին մէկ մասը : Իրը երկու տարի առաջ Բէրաւ սկսաւ պատերազմիլ Չիլիի դէմ, եւ բոլորովին յաղթուեցաւ, եւ երկիրը ինկաւ Չիլիի զօրաց ձեռքը :

Վ. Ե. Ս. Բ. Ե. Լ. ՈՒՐԵՐ

Կ'ըսուի թէ 40 ուղղէ բաղկացեալ կառուան մը եւ ուղտապանք առած են Տրապիզոնի եւ Կարնոյ մէջտեղ :

Չիլիական զարնուած հեռագիր մը կը ծանուցանեն թէ յիշեալ քաղաքին քարափունքը 500,000 լիւրայի վաճառուած են Անգլիական ընկերութեան մը :

Վիէնայէն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Հերմէքի մէջ Պոստիոյ սահմանագիծայ հետ շարունակ կուսներ կ'ըլլան Աւստրիական զօրաց եւ ապստամբաց մէջտեղ : Ապստամբք կը յաղթուին :

Կարթլիոյ նախագահը սպաննող Կիւդոյ յունիսի 50 ին, ըստ Երուսաղեոց ժամն 12 ի եւ 2 ի միջոցները վաշխիւրներ մէջ կ'արուելու վճիռ արուած է :

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Աւետարանական քերց եւտմանայ ազօթքի ժողովը պիտի ըլլայ չորեքշաբթի օր, փետ. 5/15, ըստ թուրքաց ժամն 8 1/2 ին, յԱմերիկեան լսան :

ՍՍԱԿԻ ԳԻՆԵՐԸ

Փետ. 1/13, 1882

Գոնտիլի	12.10	Բուս. երկ. բաժինը	68.
Մէթիսի	407.38	Բուսիոյ բոլ.	90.8
Թիւրքիս	910	Նարոլիս	88.7
Մէրսի	205	Գրիմից	51.20
Պէշիք	209	Անգլ. լիւր	110.32
Արմէլի	427	Մանիկ Կարգար	8.73

Ամերիկայի միախորհրաց ընկերութեան կողմէն իմրապիր շ. Բ. Կրիլն

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՆ ԹԻՒ 12. Չազմագծը, Յակարեան լսան, Թիւ 12.